

ՀԱՅԿԱՍՏԵՐ ՎՐԴ. ՊԱՅՐԱՍՏԵԱՆ

(1909 — 1989)

24 Մայիս, Չորեքշաբթի առաւօտ, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Ա. Թոռոյս վարդապետական դասուն երիցագոյն (թէ՛ տարիքով եւ թէ՛ ձեռնադրութեան կարգով — անցնող Յուլիսին բոլորած էր իր քահանայութեան յիսնամեակը) անդամ Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեանը: Մահը զինք գտաւ Ապու-Տիսի ձերանոցին մէջ, ուր կը մնար 9 ամիսներէ ի վեր հիւանդագին վիճակի մէջ, տառապելով շաքարախտէ եւ այդ հիւանդութեան ընկերացող բարդութիւններէ:

Հանգուցեալը ծնած է Քիլիս: Տարագրութենէն ետք ընտանեօք փոխադրուած է Եգիպտոս, ուր յաճախած է Գահիրէի Գալուստեան վարժարանը եւ աւարտած: 1932ի վերջին օրերուն գալով Երուսաղէմ, կ'աշակերտի ժառնգաւորաց Վարժարանին: 1935ին Սարկաւազ կը ձեռնադրուի Երջանկայիշատակ Տ. Թորգոմ Պատրիարքէն եւ կ'անցնի Ընծայարանի բաժինը, իսկ 31 Յուլիս 1938, Վարդապետի տօնին, կ'ընդունի կուսակրօն քահանայութեան ձեռնադրութիւնն ու օծումը նոյն մեծանուն Պատրիարքէն, որ իր աւագանէն առած Անդրանիկ անունը կը փոխէ Հայկասերի:

Երիտասարդ հոգեւորականին առջեւ կը բացուի գործունէութեան լայն ստապրէզ: Հազիւ քառասունքի շրջանը լրացուցած կը զրկուի Յոպպէ (Եաֆա), ուր կը մնայ տարի մը իբր օգնական՝ Տեսուչ Տ. Հայկազուն Վրդ. Արրահամեանի եւ կը դադարեցնէ տեղւոյն Ս. Գլխաղիր նորարաց վարժարանէն ներս: Յետոյ կ'անցնի Սմման, ուր կը մնայ երեք տարիներ իբր Հովիւ Անդր-Յորդանանի հայութեան եւ Տեսուչ եւ ուսուցիչ տեղւոյն Հեթումեան վարժարանին: 1942ին Երուսաղէմ վերադառնալով՝ դասեր կը ստանանէ Ս. Թարգմանչաց վարժարանէն ներս: 1946ին անդամ է Տնօրէն Ժողովոյ: 1948ին՝ Արար-Հրեայ պատերազմի ամենէն արհաւիրաց օրերուն, Հայր Հայկասեր անօրինակ արհուլթեամբ զնշակներու տարափին տակ մեռելները առաջնորդած է իրենց հանգստեան կայքին: 1951-1956 կը վարէ Տեսչութիւնը Ս. Յարութեան Տաճարին, իսկ վանական տաղնապի օրերուն կը կարգուի Աւագ Թարգման, ստանանելով միաժամանակ Մատակարարութեան պաշտօնը: Տաղնապէն ետք, աւելի բան տառամեակ մը, կը հեռանայ Երուսաղէմէն, անցնելով Սմերիկա եւ ապա Աւստրալիա: 1972ին կը վերադառնայ Ս. Աթոռ եւ 1978ին կը նշանակուի Տեսուչ Բեթղեմէմի Ս. Ծննդեան Տաճարին, պաշտօն՝ զոր առժամաբար վարած էր 1943-1946 տարիներուն: 1986ին առողջական պատճառով կը թողու պաշտօնը եւ 1988ին կը դադնայ վանք:

Հանգուցեալ Հօր վերջին օծումն ու յուղարկաւորութիւնը կատարուեցան Հինգշաբթի, 25 Մայիսի առաւօտուն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, զլիաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպս. Գազանեանի, իսկ Ս. Պատարագը մատոյց Հոգշ. Տ. Կոմիտաս Վրդ. Շէրալթթեան: Թաղման թափօրին նախագահեց Պատր. Փոխանորդ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան Վախճանեալ Հօր մարմինը ամփոփուեցաւ Ս. Փրկչի ազգային գերեզմանատան վարդապետաց բաժնին մէջ:

Տէրը Իր լոյսին մէջ թող հանգչեցնէ հոգին Իր հեզ ու ծառայատէր պաշտօնէին:

● ԴՆ. 21 Յունիս. — Երեկոյեան, Անգլիոյ Էլիզապէթ Բ. Թագուհւոյ ծննդեան 63րդ տարեդարձին առիթով, Բրիտանական Ընդհ. Հիւպատոսին կողմէ, Հիւպատոսարանի պարտէզին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին եւ Գերշ. Տ. Սեան Սրբազաններ, Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. եւ Տիար Գ. Հինգլիան:

● ԴՆ. 27 Յունիս. — Երեկոյեան, Լուսարարապետ Գերշ. Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Պատր. Փոխ. Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. եւ Հոգշ. Տ. Գրուսան Վրդ. դպցինՊէն-Կուրթօն օգակայան, զիմաւորելու համար Հայատանէն ժամանող երկրաշարժէն վիրաւոր եւ անգամահատուած 61 զփրախտները, որոնք կը բերուէին դարմանուելու Իսրայէլի հիւանդանոցներու մէջ: